

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

1.—Տիրոջ հրաշափառ Ծննդյան և Հայտնության տոնը ուրախություն ու ցնծություն է բոլոր քրիստոնյա Եկեղեցիների, և որպես տիեզերական պատմության ամենավսեմ խորհուրդը, հոգևոր հարստություն է նաև ողջ մարդկության:

Քրիստոսի Ծնունդով մարդկությունը ազատագրվեց մահվան հավերժական դատապարտումից:

Եթե Քրիստոս չծնվեր ժամանակի մեջ, ապա մարդկությունը կտրվեր մահվան հավերժությանը:

Կյանքը կկորցներ իր բարոյական արժեքը:

Մարդը կդառնար մարմնի և մեղքի գերին, ահա թե ինչո՞ւ Քրիստոսի հայտնությամբ և ծնունդով մարդկությունը ստացավ իր գերազանց երանության փառապսակը:

Մարդը ազատագրվեց բռնության ճիրաններից, ազատագրվեց թշվառության կապանքներից:

«Այսօր տօն է Սուրբ Ծննդեան. աւետիս:
Տեառն մերոյ եւ Յայտնութեան. աւետիս:
Այսօր արեւն արդարութեան. աւետիս,
Երեւեցաւ ի մէջ մարդկանն. աւետիս»:

Արդարության արեգակի ծնունդով լուսավորվեց ողջ տիեզերքը: Ճշմարտությունը սերմանվեց երկրի վրա: Երկիրը իր խնդությունը ցողեց առատահեղ շնորհներով, և մարդը լուսավորվեց արդարությամբ:

2.—**«Փառք Աստծուն՝ բարձունքներում, և երկրի վրա խաղաղությո՞ւն և հաճություն՝ մարդկանց մեջ»** (Ղուկ. Բ 14):

Մեզանից շուրջ երկու հազար տարիներ առաջ հնչած հրեշտակային այս օրհներգը, այսօր, այս սքանչելի տոնին նո՛ր պայծառությամբ է հնչում և մեր սրտերը լցնում հրճվանքով և Ծննդյան բերկրանքով:

Առաքինության զգայարաններով մոտենանք այս տոնի խորհրդին և չտրտմենք, որովհետև Ծննդյան տոնը տոնն է բոլորիս, առաքինության շնորհներով զարդարված բոլոր քրիստոնյաներիս:

«Այսօր Սուրբ Կոյսն անապական, աւետիս.
Ծնաւ եբեր զանմահ արքայն. աւետիս:

Այսօր հրեշտակք յերկնից իջան. ալեluիս:
Ընդ մեզ օրհնեն զանմահ արքայն. ալեluիս»:

Գոհություն հայտնենք մեր Տիրոջը իր Ծննդյան տոնի առթիվ և **«արթուն լինենք և սիրո ու հավատի զրահները հագնենք և փրկության հույսի սաղավարտը դնենք. որովհետև Աստված մեզ չնախասահմանեց բարկության համար, այլ՝ փրկությունը ժառանգելու համար՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով»** (Ա Թեսաղ. Ե 8—9):

Փառք մեր Աստծուն՝ Արարչին տիեզերաց:

Խաղաղությո՞ւն երկրի վրա:

Մեր փոքրիկ և տառապյալ երկրի, դարեր շարունակ պատերազմներ ու արհավիրքներ տեսած, արյուն և արցունք ճաշակած, բայց միշտ խաղաղության և համերաշխության ձգտող երկրի:

Մենք հավատացած ենք, որ Քրիստոսի Ավետարանի շնորհիվ մի օր, ի վերջո լուսավորվելու են մարդկության սրտի խավարային ծալքերը, որովհետև Քրիստոսի Ծնունդով դժոխքը ավերվեց և չարը պարտվեց:

«Այսօր դժոխքն սարսեցան. ալեluիս:
Գունդք դիւաց յոյժ տրտմեցան. ալեluիս:
Այսօր չարքն կարկեցան. ալեluիս:
Եւ ադամեանքն ուրախացան. ալեluիս»:

Եվ հաճություն մարդկանց մեջ:

Հաճությունն ու համերաշխությունը պետք է կազմեն մարդկային ընկերային կյանքի հիմքը: **«Զգեստավորվենք մեր Տեր Հիսուս Քրիստոսով»** (Հռոմ. ԺԴ 14) և շարունակենք ապրել առաքինի կյանքով ի փառս Աստուծո:

3.—Բեթղեհեմի մեջ ծնված փոքրիկ մանուկը դարձավ մարդկության փրկիչը, ինչպես Ավետարանն է վկայում՝ **«ահա ձեզ մեծ ուրախություն եմ ավետում, որը ամբողջ ժողովրդինը կլինի, որովհետև այսօր Դավթի քաղաքում ձեզ համար ծնվեց մի Փրկիչ, որ օծյալ Տեր է»** (Ղուկ. Բ 10—11):

Բեթղեհեմի մսուրը դարձավ օրհնության աղբյուր և փրկության գանձարան: Արդարության, գեղեցկության և ճշմարտության մարմնացումը հանդիսացող մանուկ Հիսուս իր Աստվածահայտնությամբ համբուրեց խավարի մեջ ընթացող մարդկության ճակատը և իր շուրթերով դրոշմեց փրկության վառ համբույրը:

Հիսուս, որպես ծագած մի նոր լուսեղեն Աստղ, լուսավորեց ողջ մարդկության մթամած և մառախլապատ հոգին և որպես նո՛ր արշալույս իր կենդանարար սիրով գծեց փրկության ճամփան:

Ծննդյան Տիեզերահյուս սիրո շնորհներից բաժին է հասել նաև մեզ, հայ ժողովրդի զավակներիս, որպես անսպառ աղբյուրը այդ պարգևների՝ մեր Մայր Եկեղեցին տոնախմբում է այսօր **«մեծ եւ սքանչելի»** խորհուրդը, մեր Տիրոջ՝ Հիսուսի Ծննդյան, **«որ յայսմ աւուր յայտնեցաւ»:**

Աստվածապաշտությամբ տոնախմբենք այս տոնը, որովհետև **«Աստվածապաշտությունը օգտակար է ամեն ինչի և նա ունի կյանքի ավետիսը, ա՛յս կյանքի և հանդերձյալի»** (Ա Տիմոթ. Դ 8):

4.—Կյանքի ավետիսը՝ Հիսուսի ծնունդը ,մարդկության պարգևն ու բա-

ներարությունը եղավ, հոգու բարերարությունը, որ ձգվեց Բեթղեհեմի մսուրից մինչև երկնի արքայության դարպասները:

Տիրոջ մարդեղության խորհուրդը մեղավոր մարդկության փրկագործության հիմքը դարձավ, փրկագործություն, որը որպես ճանապարհ, դարձավ քրիստոնյաների հավատքն ու կյանքը:

Մարդկային հոգու պատմության ընթացքը կարգավորող, նրա ոգու կոչումը առաջնորդող և զարգացող միակ պարգևատուն հանդիսացավ մարդացյալ Աստված:

Աստված իր մարդեղությամբ ցույց տվեց մարդու աստվածացման ճանապարհը:

Իմաստասիրական, ընկերային, հոգեբանական ո՛չ մեկ տեսություն չի՛ չափագրել և չի՛ արժևորել մարդուն այն վեհությամբ ու իմաստով, ինչպես քրիստոնեությունը:

Եվ ո՛չ ոք չի սիրել մարդուն այնպես, ինչպես քրիստոնեության հիմնադիրը՝ Հիսուս:

Աստված, ինչպես խավարից ծագեցրեց լույս, այնպես էլ առաքեց իր Միածին Որդուն փրկելու մեղուցյալ հոգիները:

«Աստված է, որ ասաց. «Խավարից թող լույս ծագի», և նա ծագեցրեց մեր սրտերում Աստծու փառքի գիտության լույսը, որը ճառագայթում է Հիսուս Քրիստոսի դեմքը» (Բ Կորնթ. Դ 6):

ՔՐԻՍՏՈՍ ԾՆԱՒ ԵՒ ՅԱՅՏՆԵՑԱՒ:
ՁԵԶ ԵՒ ՄԵԶ ՄԵԾ ԱՒԵՏԻՍ: